Արձանագրություն N 2
Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման /թենիսի դաշտի կառուցման/ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/56» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան 31.07.2020թ.
ժամը՝16:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան, Ա. Սարգսյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Հարությունյան, Ա. Ղալումյան
Ի. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/56» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման և գնահատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի հուլիսի 31-ին, ժամը 16:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/56» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակցի անվանումը
1	**Աստիճան ՍՊԸ**
2	**ԻՐՏԻԳ ՍՊԸ**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ	Մասնակիցների անվանումները		
			ԻՐՏԻԳ ՍՊԸ		Աստիճան ՍՊԸ
				Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ
1	**Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման /թենիսի դաշտի կառուցման/ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ**	366528	358800	299000	300000

3.2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Աստիճան ՍՊԸ	Բավարար
ԻՐՏԻԳ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Տվյալներ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

(Ա. Կիրակոսյան)

5.1 Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները.

- **ԻՐՏԻԳ ՍՊԸ** -ի կողմից հայտով ներկայացվել են հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները, որոնք համապատասխանում են հրավերի պայմաններին:

-Աստիճան ՍՊԸ- ի կողմից հայտով ներկայացվել են հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները, սակայն ներկայացված նմանատիպ պայմանագիրը կնքված է 15.04.2015 թվականին, իսկ հրավերի 2.4 կետի ա ենթակետի համաձայն.

-մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

5.2 Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է հետևյալ կարգով.

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումները	
		Աստիճան ՍՊԸ	**ԻՐՏԻԳ ՍՊԸ**
Մասնագիտական փորձառություն	40	**0**	**40**
Աշխատանքային ռեսուրսներ	30	**30**	**30**
Ընդամենը	70	**30**	**70**

5.3 Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/.

Չափ. համարը	Գնային պայմանի գնահատականը

	Մասնակցի անվանումը	
	Աստիճան ՍՊԸ	**ԻՐՏԻԳ ՍՊԸ**
1	29.9	30

5.4 Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/

Չափ. համարը	Մանակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)	
	Մասնակցի անվանումը	
	Աստիճան ՍՊԸ	**ԻՐՏԻԳ ՍՊԸ**
1	29.93	42

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/56» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

6.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/56» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում **ԻՐՏԻԳ ՍՊԸ**-ն, որպես ամենաբարձր գնահատական (ՄԳ) ստացած մասնակից:

6.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն հայտարարել անգործություն /5 օրացուցային օր/ և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Ա. Ղալումյան
		Ա. Սարգսյան
		Կ. Հարությունյան
		Ռ. Աբրահամյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան